դէպի այն տեղը, ուր գետը թափւում է ծովը: Այստեղ սարքել էին նրանք իրանց ձկնորսութեան սապաթները, որ ամէն առաւօտ դուրս էին բերում լի անուշահամ տառեխներով:

Անգղ գետի վերին մասը կոչւում է Խոշաբ՝ քանի որ Խոշաբ կամ Անձեւացեաց կոչուած գաւառի միջովն է հոսում: Իսկ երբ մտնում է Հայոց-ձորը, նա իր ամբողջ երկարութեամբ բաժանում է այդ հովիտը երկու մասերի՝ հիւսիսային եւ հարաւային: Իսկ Շամիրամի առուն, հիւսիսից գալով, կտրում է Անգղին եւ, արհեստական կամուրջի վրայից անցնելով, գնում է դէպի Արտամեդ, իսկ այնտեղից՝ Վան: Այդ վերջինը աւելի օգուտ է տալիս Հայոց-ձորին, քան թէ առատաջուր Անգղը: Իր հոսման ընթացքում Շամիրամի առուն ոռոգում է շատ գիւղերի անդաստանները, արտօրայքը: Երբեմն ագուգայների ու խողովակների միջով, երբեմն բաց առուակով հոսում է նա, իսկ երբ խրամատների, փոսերի վրայով պէտք է անցնի, այսպիսի տեղերում նրա համար բարձր ամբարտակներ են կառուցուած, որոնց վրայով, կարծես օդի միջից, թռչում է ջուրը, առանց նեղութիւն կրելու, առանց շեղոելու իր ճանապարհից: Այդ բոլորը այնքան ճարտար կերպով է կառուցուած, այնքան մեծագործ է, որ եթէ հռչակաւոր նինոէացի թագուհու գործը չհամարենք, անշուշտ մեր Արտաշէս Երկրորդի գործը համարելու է, որ արհեստական ջրանցքով այդ գետը տարաւ Արտամեդի բուրաստանները զարդարելու եւ կոչեց այն աւանը Զարդ: Եւ իրաւ, նա մի ժամանակ Վասպուրականի զարդն էր:

Արեւը բարձրացաւ: Այժմ շրջակայքը աւելի պայծառութեամբ էին երեւում: Ասլանը խորասուզուած էր, ո՛վ գիտէ, ինչ մտածութիւների մէջ, եւ ամենեւին չէր խօսում: Ես հիացած էի շրջակայ տեսարաններով, որոնք ե՛ւ ուրախութիւն էին ազդում ինձ, ե՛ւ տրտմութիւն: Որքա՜ն խիտ ազգաբնակութիւն է եղել այստեղ, որքա՜ն երջանիկ ապրելիս են եղել այստեղ մարդիկ: Իսկ ա՞յժմ: Այժմ աւերակ, բոլորովին անմարդաբնակ գիւղերի թիւը աւելի շատ էր, քան թէ շէն գիւղերը: Ամէնուրեք հանդիպում էինք կիսակործան եկեղեցիների, ամայի վանքերի եւ լայնատարած գերեզմանատների, որոնց շուրջը մի ժամանակ մարդիկ են բնակել: Իսկ այժմ այդ նոիրական վայրերը ծառայում էին որպէս որջ վայրենի գազանների, կամ նրանցից չտարբերող քուրդ աւազակների: Կարծես մի կործանիչ ձեռք անցել էր այդ հովիտով եւ բոլորը՝ ինչ որ լաւ էր, ինչ որ բարի էր՝ ոչնչացրել էր:

— Մեր նախնիքը ծոյլ մարդիկ չեն եղել, — ասաց Ասլանը, — նրանք հոգ են տարել երկրի շինութեան համար, եւ դրա ապացոյցը կարող է լինել այդ